ԷՍՊԵՍ ՉԻ ՄՆԱ

(Հին զրույց)

Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ.
Եվ ի՞նչն է հաստատ աշխարհքի վրրա...—
Աշխարհքում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա։—
Լինում է՝ իբրև գյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ։
Ունենում է սա մի խելոք տղա,
Տանում է ծառա տալի մեկի մոտ։

Տարիք են անցնում։ Էս խելոք տղեն
Էնպես է ազնիվ ու ժիր ծառայում,
Որ տերն էլ սրրա վարձը շատացնում,
Ինչպես իրենը՝ էնպես է նայում։
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, հիմի էլ էնպես
Էլ մերկ ու տրկլոր, էլ քաղցած հո չե՞ս։
— Չէ՛, լավ եմ, հայրիկ, ապրուստս միշտ կա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
Առաջ է գընում տղեն օրն օրին,
Վերջը բարձրանում, պալատն է հասնում,
Դառնում է ծառա մեծ թագավորին։
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ ես ուզում,
Լողում ես առատ էս լիքը ծովում։
— Հա՛, լի եմ, հայրիկ, դու հանգիստ գընա,

Բայց ինչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
30 Էնքան է սիրվում մեր խելոք ծառան,
Որ թագավորը բերում է սըրան
Իրեն տերության երկրորդն է անում։
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.
35 — Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ինչ է մընում,
Քու խոսքովն են ողջ նըստում — վեր կենում։
— Հա՛, մեծ եմ, հայրիկ, նազիր եմ ահա,
Բայց ինչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
40 Էս բարի երկրի թագավորը ծեր
Մի օր անժառանգ ընկնում է մեռնում,
Գահն ու աշխարհքը մընում են անտեր։
Ժողովք են կանչում երկրի մեծերին։
Ժողովք են գալի, խորհուրդ են անում,
45 Բերում են իրենց խելոք նազիրին
Առքով ու փառքով թագավոր դընում,
Ու մեր գյուղացին լըսում է մի օր՝
Դարձել է իրեն որդին թագավոր։
Գալիս է. — Որդի՛ս, էլ ինչդ է պակաս,
50 Ամբողջ աշխարհքում մի դու ես, որ կաս...
— Փառք Աստծու, հայրիկ, ունեմ թագ ու գահ,
Բայց ինչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
Իր գահին բազմած ինքնակալը նոր
55 Մահվան ու կյանքի վճիռ է անում՝
Բուռը հավաքած աշխարհքը բոլոր։

Բուռըդ հավաքի աշխարհքը թեկուզ,
Թողնելու ես ողջ դարձյալ աշխարհքին։
Մեր թագավորն էլ մի անգամ էսպես
Մահիճ է ընկնում, ավանդում հոգին։

Լըսում է ծերուկ հայրը մի օր էլ,
Որ իր թագավոր որդին չըմնաց։
Ինչ ասել կուզի — գալիս է վըրեն,
Էլ ի՛նչ մըղկըտոց, էլ ի՛նչ սուգ ու լաց...
Զորքով, աշխարհքով, ծեսով, հանդեսով
Արքային վայել թաղում են անում,
Ու վեր են կենում՝ զըրույց անելով
Ամենքը իրենց տըներն են գնում։
Տարիք են անցնում։ Հայրը մի անգամ
Գալիս է որդու շիրիմի վրա։
Գալիս է, տեսնում՝ մարմար մահարձան,
Բայց վըրեն գրած... «Էսպես չի մընա...»։

Գընում է հայրը։ Տարիք են անցել.
Ո՞վ կարա մեզնից հաշիվն իմանա...
Էն օրից էսօր անվերջ, դարեդար
Զրույցն ասում է — «Էսպես չի մընա...»
Ու չըկա շըքեղ արձանն արքայի,
Ոչ նրա քաղաքն աշխարհքի վըրա,
Մերն է աշխարհքը ու կյանքը հիմի,
Բայց մեր աշխարհքն էլ... էսպես չի մընա..